ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 հոկտեմբերի 2025 թվականի N 479-Ա

«ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼՈՒՍԻՆԵ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, հիմք ընդունելով 2024 թվականի դեկտեմբերի 5-ի N 22 պայմանագրի 5.1 կետի 3-րդ ենթակետը և «Ներքին Հանդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 60-րդ կետը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2025 թվականի հոկտեմբերի 13-ից լուծել «Ներքին Հանդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող (այսուհետ՝ Համակարգող) Սեյրան Զաքարյանի հետ 2024 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված N 22 աշխատանքային պայմանագիրը:

2. «Ներքին Հանդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության Համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Իսրայելյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության Համակարգողի պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 10
ք. Կապան